

Զեկույց-հաշվետվություն

Դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական, քրեական և վարչական մասնագիտացման բաժինների արտահերթ համալրման նպատակով անցկացված որակավորման քննությունների դիտարկման վերաբերյալ

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպություն

0002 Երևան, ՀՀ, Ամիրյան 11

+374 10 505303

info@prwb.am

Սույն փաստաթղթում տեղ գտած մտքերն ու կարծիքներն օգտագործելիս խնդրում ենք պահպանել հղումը «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ին

Երևան, 2019



Տեղեկություններ որակավորման գործընթացի մասին

2019 թվականի ապրիլի 10-ին ՀՀ Դատական իշխանության պաշտոնական կայքում հայտարարություն է տարածվել դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության ժամանակի և վայրի մասին:

Հիմք ընդունելով ՀՀ Դատական օրենսգրքի 102-րդ հոդվածի 4-րդ մասը, որի համաձայն՝ *որակավորման գրավոր քննությանը և հարցազրույցին բացառությամբ Բարձրագույն դատական խորհրդի անդամների միջև հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկմանը, կարող են ներկա լինել և դրանց ընթացքին հետևել իրավունքի բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների մինչև երեք ներկայացուցիչ՝ ըստ դիմումների ներկայացման ժամանակագրական առաջնահերթության, յուրաքանչյուր հասարակական կազմակերպությունից՝ մեկ ներկայացուցիչ, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ն հայտ է ներկայացրել և դիտարկել որակավորման գրավոր քննության գործընթացը¹:*

ՀՀ Դատական օրենսգրքի 100-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը յուրաքանչյուր տարի ոչ ուշ, քան մինչև սեպտեմբերի 15-ը սահմանում և հրապարակում է որակավորման գրավոր քննության ձևը, քննական հարցերի կառուցվածքի և բովանդակության նվազագույն պահանջները, գրավոր քննության կազմակերպման և անցկացման կարգը, այդ թվում՝ քննական նյութերի բաշխման, քննության ընթացքի, իրավական կամ այլ փաստաթղթերից կամ տեխնիկական միջոցներից օգտվելու, քննական աշխատանքները գնահատելու կարգը, գրավոր քննության արդյունքներով նվազագույն անցողիկ միավորը (որը չի կարող պակաս լինել ընդհանուր միավորների 60 տոկոսից)²:

Դատական օրենսգրքի 99-րդ հոդվածի համաձայն՝ *հավակնորդների կողմից ներկայացված հայտերի ու դրանց կից ներկայացված փաստաթղթերի ստուգումը, ինչպես նաև հայտի ընդունման մերժումը իրականացվում է Դատական դեպարտամենտի կողմից:*

Դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժնի արտահերթ համալրման համար անհրաժեշտ որակավորման քննությունը տեղի է ունեցել 2019 թվականի ապրիլի 25-ին ՀՀ Փաստաբանների պալատի շենքում:

Քաղաքացիական մասնագիտացման բաժնի արտահերթ համալրման համար անհրաժեշտ որակավորման քննությանը մասնակցելու հայտ է ներկայացրել 47 թեկնածու:

¹ Դիտարկումն իրականացրել է կազմակերպության իրավական հարցերով փորձագետ Հասմիկ Հարությունյանը:

² Դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրումը կատարվում է հերթական համալրման համար սահմանված կարգով՝ արտահերթ համալրման անհրաժեշտության մասին որոշումը կայացնելուն հաջորդող գործողություններում պահպանելով հերթական համալրման համար նախատեսված ժամկետների համամասնությունը: ՀՀ Դատական օրենսգրքը, Հոդված 95



Քննությանը մասնակցելու համար ՀՀ Փաստաբանների պալատ ներկայացել է 45 թեկնածու, բացակայել են 2-ը: Քննությունից բացակա 2 հավակնորդների բացակայության պատճառները հայտնի չեն:

Մեկ թեկնածու քննությունը սկսելուց թույլներ հետո հեռացել է՝ պայմանավորված անձնական խնդիրներով:

Քաղաքացիական մասնագիտացման բաժնի արտահերթ համալրման համար անհրաժեշտ որակավորման քննությանը 2019 թվականի ապրիլի 25-ին փաստացի մասնակցել է դատավորների թեկնածուների 44 հավակնորդ:

Որակավորման քննության դիտարկման արդյունքներ

Քննության սկիզբը և ընթացքը

Քննությունը սկսելուց և քննական խնդիրը ընտրելուց առաջ՝ Դատական դեպարտամենտի կողմից ներկայացվել են ընթացակարգային կանոնները³, մասնավորապես՝ Քննության ժամանակ հավակնորդին չի թույլատրվում.

1) քննասենյակ տանել որևէ նյութ, թուղթ, գրիչ, պայուսակ, հեռահաղորդակցման և համակարգչային սարքեր, այդ թվում՝ բջջային հեռախոս, ձայնագրիչներ, տեղեկատվության էլեկտրոնային կրիչներ կամ այլ տեխնիկական սարքավորումներ.

2) օգտագործել իրավական ակտեր՝ մեկնաբանության գրքեր, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, նախապես կազմված գրառումներ կամ այլ նյութեր, այդ թվում՝ այդպիսի տեղեկություններ պարունակող կամ տրամադրող ձայնային կամ այլ տեխնիկական միջոցներ ու սարքավորումներ, բացառությամբ հավակնորդին հատկացված համակարգչում տեղադրված իրավական ակտերի և այլ նյութերի.

3) քննասենյակում և դրա հարակից տարածքներում այլ հավակնորդի հետ խոսել կամ ժեստերով և (կամ) որևէ այլ կերպ հաղորդակցվել.

4) ծխելը կամ ծխելու պատրվակով դուրս գալը.

5) քննության ընթացքում, բացի սահմանափակումից, այլ տարածք մուտք գործելը.

6) աշխատանքը հանձնելուց հետո քննասենյակում կամ անմիջապես հարակից տարածքներում մնալը:

³ ԲԴԽ-34-Ո-91, 2018թ., Որոշում որակավորման գրավոր քննության ձևը, քննական հարցերի կառուցվածքի և բովանդակության նվազագույն պահանջները և գրավոր առաջադրանքների տարբերակների քանակը, որակավորման գրավոր քննության կազմակերպման և անցկացման կարգը, գնահատման հանձնաժողովի աշխատանքը գաղտնի իրականացնելու անհրաժեշտ մանրամասները, քննական աշխատանքների ստուգելու և գնահատելու կարգը, գնահատման չափորոշիչները և գնահատման սանդղակը, որակավորման գրավոր քննության արդյունքներով նվազագույն անցողիկ միավորը և որակավորման գրավոր քննության արդյունքների ստուգաթերթի ձևը սահմանելու մասին,

Հասանելի է հետևյալ հղումով <http://www.court.am/arm/top/bdx/decisions/%D4%B2%D4%B4%D4%BD-34-%D5%88-91.pdf>



Դիտարկումների ժամանակ արձանագրվել է, որ հավակնորդը հսկիչի ուղեկցությամբ դուրս է եկել ծխելու պատրվակով և մի քանի թույլե հետո վերադարձել է:

Մինչ քննության սկիզբը դեպարտամենտի ներկայացուցիչները տեղեկացրել են, որ սանհանգույցները խլացված են, և հնարավոր չէ հեռախոսից օգտվել: Մակայն սանհանգույցում դիտորդը կարողացել է օգտվել համացանցից և ունեցել է զանգ կատարելու հնարավորություն: Հարկ է նշել նաև, որ թեկնածուները սանհանգույց գնալուց առաջ, ինչպես նաև վերադառնալուց հետո զննության չեն ենթարկվել:

Նախապես սահմանվել են քննական հարցերի պատասխանները ներկայացնելու համար տեխնիկական պահանջները, մասնավորապես՝

Պատասխանները շարադրվում են համակարգչով՝ Microsoft Word ծրագրի միջոցով՝ պահպանելով փաստաթղթի ձևաչափը՝

Տառատեսակը՝ GHEA Grapalat.

Տառաչափը՝ 12.

Տողերի հեռավորություն՝ 1,15 սմ.

Լուսանցքները՝ վերևից՝ 2սմ, ներքևից՝ 2 սմ, աջից՝ 3 սմ, ձախից՝ 1,5սմ.

Նոր պարբերության խորությունը՝ 1սմ.

Էջերը համարակալված 1-ից, էջի ստորին կենտրոնական մասում:

Քննությունը սկսվելուց անմիջապես հետո՝ թեկնածուներից մեկը տեղեկացրել է, որ ինքը դժվարանում է նշված տառատեսակով աշխատել:

Քննության կազմակերպչական խումբը փորձել է հնարավորություն ստեղծել տառատեսակը փոխելու համար, սակայն բոլոր համակարգիչները միացված են եղել մեկ համակարգի, և ժամանակի և տեխնիկական առումով նման փոփոխություն կատարելը հնարավոր չի եղել:

Քննության դիտարկման ընթացքում արձանագրվել են համակարգչից օգտվելու հետ կապված տեխնիկական պարբերական խնդիրներ՝ պայմանավորված աշխատանքի համար ներկայացված ձևական պահանջների հետ:

Քննական հարցերի ընտրություն

2019թ. մարտի 11-ի ԲԴԽ-15-Ո-58 որոշման՝ *որակավորման գրավոր քննության հարցերի մշակման կարգի համաձայն՝ քննության անցկացման համար մշակված հարցերն առանձին-առանձին ծրարավորված ու փակված (զմռսված) վիճակում և ծրարների վրա կատարված անհրաժեշտ նշումներով, համապատասխան մասնագետի (մասնագետների) կամ մասնագիտացված կազմակերպության կողմից քննության օրը քննասենյակում հանձնվում են Լիազոր ներկայացուցչին՝ վիճակահանությամբ քննական առաջադրանքների տարբերակների կազմումը կազմակերպելու նպատակով: Քննական հարցերի թղթային տարբերակների հետ Լիազոր ներկայացուցչին հանձնվում են նաև դրանք պարունակող էլեկտրոնային կրիչները:*



Կարգի համաձայն՝ Լիազոր ներկայացուցիչը քննական առաջադրանքների տարբերակը որոշելու նպատակով քննասենյակում անցկացնում է վիճակահանություն հետևյալ կարգով. 1) համապատասխան մասնագիտացմամբ քննություն հանձնող հավակնորդներից երկուսը փակ ծրարներով սեղանին դրված նյութական և դատավարական իրավունքի հիմնախնդիրներին վերաբերող քննական հարցերից ընտրում են մեկական քննական հարց. 2) յուրաքանչյուր հավակնորդի ընտրած, ինչպես նաև սեղանին մնացած քննական հարցերի համակցությունից կազմվում է առաջադրանքների թվով երեք տարբերակ, ինչից հետո մեկ այլ հավակնորդ այդ տարբերակներից ընտրում է մեկը. 3) ընտրված տարբերակը համարվում է քննական, համապատասխան քննական հարցերով ծրարները բացվում են, և քննական հարցերն այլ լրացուցիչ նյութերի հետ մեկտեղ ներբերանվում (տեղադրվում) են հավակնորդների համակարգիչների մեջ⁴:

Կարգը չի սահմանում, սակայն, թե ինչ է կատարվում քննության առաջադրանքների չբացված օրինակների հետ:

Սահմանված կարգին համապատասխան՝ քննության օրը ընտրվել է նախապես կազմված և ներկայացված քննական 3 առաջադրանքներից մեկը:

Առաջադրանքների 2 չբացված օրինակները դուրս են տարվել քննասենյակից: Այնուամենայնիվ ծրարներն առանց բացելու հեռացնելու հանգամանքը հնարավորություն չի տվել հավաստիանալ քննական խնդիրների տարբերությունների մեջ:

Քննությանը հատկացված ժամանակը և առաջադրանքի բարդության համաչափությունը

Որակավորման գրավոր քննության կազմակերպման և անցկացման կարգի համաձայն՝ քննության տևողությունը սահմանվում է 6 ժամ⁵:

Դիտորդական առաքելության շրջանակներում ներկայացված առաջադրանքի և հատկացված ժամանակի համաչափության գնահատում չի իրականացվել, այնուամենայնիվ թեկնածուների մեծ մասը հայտնել է, որ քննական առաջադրանքին հատկացված ժամանակը քիչ է եղել, մինչդեռ խնդիրները եղել են բարդ, իսկ դրանց պատասխանելը ժամանակատար:

Նմանապես, հնչեցվել են կարծիքներ, որ առաջադրանք-խնդրի լուծման համար անհրաժեշտ ոչ բոլոր իրավական ակտերն են տրամադրվել, նախադեպային որոշումներ ընդհանրապես չեն տրամադրվել:

Որոշ թեկնածուների կողմից առաջարկվել է, որ քննությանը տրամադրվեն նաև իրավական ակտերի թղթային տարբերակները:

⁴ Նույն տեղում, Հավելված 3, Որակավորման գրավոր քննության կազմակերպման և անցկացման կարգը, Կետ 27

⁵ Նույն տեղում, Կետ 30



Գրավոր աշխատանքի հանձնում

Որակավորման գրավոր քննության կազմակերպման և անցկացման կարգի համաձայն⁶՝ *Գրավոր աշխատանքն ավարտելուց հետո հավակնորդը, Լիազոր ներկայացուցչի թույլտվությամբ, տպիչի միջոցով տպում է այն երկու օրինակից, որոնցից մեկի վրա գրում է իր անունը և ստորագրում է բոլոր էջերը: Այնուհետև, Դատական դեպարտամենտի ներկայացուցչին այդ երկու օրինակների վրա փակցնում է մտապահելու հնարավորությունը բացառող համապատասխան ծածկագրեր: Հավակնորդն իր կողմից չստորագրված օրինակը հանձնում է Դատական դեպարտամենտի ներկայացուցչին, իսկ ստորագրված երկրորդ օրինակը ծախելուց հետո տեղադրում է թափանցիկ և կնքված արկղի մեջ: Նշված արկղի բացվող հատվածը ստորագրվում է Լիազոր ներկայացուցչի և 13 ցանկացող Դիտորդների և հավակնորդների կողմից: Լիազոր ներկայացուցիչը ծածկագրերին համապատասխանող ունկնդիրների ցուցակը տեղադրում է նշված արկղի մեջ: Սույն կետում նշված արկղը թույլատրվում է բացել քննության արդյունքները հրապարակելիս:*

Աշխատանքները տպելու տեխնիկական խնդիրներ

Քննաժամանակը լրանալուց առաջ որոշ թեկնածուներ սկսել են տպել աշխատանքները: Արձանագրվել է, որ ընդհանուր ցանցին միացված բոլոր համակարգիչները երկկողմանի են տպում, մինչդեռ դեպարտամենտի ներկայացուցիչը նախապես նշել էր աշխատանքները միակողմանի տպելու անհրաժեշտության մասին:

Մասնագետի կողմից մի քանի փորձից հետո հնարավոր է եղել առաջին աշխատանքը տպել միակողմանի, սակայն դրան հաջորդող գրավոր աշխատանքը կրկին երկկողմանի է տպվել: Մասնագետը տվյալ համակարգչի կարգավորումները փոխել է, և աշխատանքը տպվել է միակողմանի:

Այնուհետև պատասխանատուների կողմից առաջարկվել է բոլոր աշխատանքները տպել երկկողմանի, քանի որ յուրաքանչյուր համակարգչի կարգավորումները հերթով փոխելը ժամանակատար կլինի:

Հարցի կապակցությամբ դիտորդները առաջարկել են ևս մի քանի աշխատանք տպել միակողմանի տարբերակով, որպեսզի առաջին երկուսը հնարավոր չլինի նույնականացնել, ինչից հետո բոլոր աշխատանքները կտպվեն երկկողմանի: Դիտորդների առաջարկը Դատական դեպարտամենտի ներկայացուցիչների կողմից ընդունվել է:

Հարկ է նշել, որ այդ ընթացքում տեխնիկական հարցի քննարկումն ու քննասեյակում տպելու փորձեր կատարելը բացասաբար են անդրադարձել դեռևս աշխատանքը չավարտած որոշ թեկնածուների վրա: Թեկնածուներից մեկը վրդովված հայտնել է, որ ինքը դեռևս գրում է, և իր ետևում մարդկանց քննարկումները իրեն խանգարում են:

⁶ Նույն տեղում, կետ 37



Աշխատանքները տպելու գործընթացում արձանագրվել է մեկ այլ խնդիր ևս: Մասնավորապես քննության ընթացքում թեկնածուներին տպելու հարցում կարողանում էր օգնել մեկ անձ, մինչդեռ Դեպարտամենտից Պալատում ներկա էին 10-ից ավել հսկիչներ, ուժքեր, մեր կարծիքով, կարող էին կազմակերպել տպելու աշխատանքները, և ըստ այդմ հնարավոր կլինեին խուսափել հերթերից: Ուստի անհրաժեշտ էր նախապես կազմակերպել և պլանավորել ներկայացուցիչներից յուրաքանչյուրի դերը՝ ըստ կազմակերպչական աշխատանքների անհրաժեշտության:

16:35-ից հետո՝ երբ քննությունն արդեն ավարտվել էր, թեկնածուները չէին կարողանում իրենց աշխատանքը տպել, քանի որ սպասում էին, որ Դեպարտամենտի ներկայացուցիչը մոտենար և կազմակերպեր տպելու գործընթացը, ինչի արդյունքում տպելու գործընթացը տևել է 2 ժամից ավելի:

Նմանապես, խնդրահարույց է դիտարկվում համակարգչային մասնագետի կողմից որոշ թեկնածուների աշխատանքները տպելու ժամանակ հատկացված օգնությունը: Նման աջակցությունը խնդրահարույց է այն պատճառով, որ ոչ բոլոր թեկնածուներն են օգտվել մասնագետի օգնությունից: Այսպես՝ Դեպարտամենտի ներկայացուցչի կողմից նախապես հայտարարվել է, որ թեկնածուները պետք է իրենք իրենց աշխատանքը համապատասխանեցնեն գրավոր աշխատանքի համար պահանջվող չափանիշներին: Մինչդեռ որոշ թեկնածուներ դիմել են համակարգչային մասնագետին, ով փոխել է աշխատանքը՝ ըստ պահանջված չափանիշների, իսկ նրանք, ուժքեր սահմանված ժամին տպել և դուրս են եկել, նման օգնությունից չեն օգտվել:

Քննության ավարտից հետո աշխատանքի շարունակում

Վերոնշյալ կարգի համաձայն՝ *Քննության համար հատկացված ժամանակն ավարտվելուց հետո հավակնորդը պարտավոր է դադարեցնել աշխատանքը և սույն կարգի 37-րդ կետով սահմանված կարգով այն անմիջապես հանձնել Դատական դեպարտամենտի ներկայացուցչին:*

Դիտորդն արձանագրել է, որ քննական աշխատանքը սկսվել է առավոտյան ժամը 10:35-ին: Ըստ սահմանված կարգի՝ քննությանը հատկացված էր 6 ժամ, և այն պետք է ավարտվեր 16:35:

Այս ընթացքում արձանագրվել է, որ չնայած աշխատանքի համար հատկացված ժամանակը պաշտոնապես ավարտված էր, այնուամենայնիվ թեկնածուներից մի քանիսը շարունակել են աշխատել: Ավելին, *արձանագրվել է դեպք, երբ թեկնածուն դուրս է եկել, քննարկել քննական առաջադրանքը մեկ այլ թեկնածուի հետ և վերադարձել իր համակարգչի մոտ՝ աշխատանքը շարունակելու:*

Մինչդեռ կարգի համաձայն՝ *քննության ժամանակ հավակնորդին չի թույլատրվում՝ քննասենյակում և դրա հարակից տարածքներում այլ հավակնորդի հետ խոսել կամ ժեստերով*



և/կամ որևէ այլ կերպ հաղորդակցվել, (...) աշխատանքը հանձնելուց հետո քննասենյակում կամ անմիջապես հարակից տարածքներում մնալ⁷:

Այս խնդիրը ներկայացվել է պատասխանատուներին, ինչից հետո հայտարարվել է, որ բոլոր համակարգիչները արգելափակված են, և հնարավոր չէ աշխատանքը շարունակել: Յուրաքանչյուր համակարգիչ արգելափակումից դուրս պետք է բերվեր՝ միայն աշխատանքը տպելու համար:

Սակայն 17:15-ի դրությամբ արձանագրվել են դեպքեր, երբ թեկնածուները շարունակել են համակարգիչ վրա իրենց աշխատանքներում ավելացումներ կատարել:

Այսպես՝

համար 10՝ Սադոյան Լիլիթ

համար 15՝ Սարգիս Արմենակյան

համար 39՝ Անի Համբարձումյան

Այս հանգամանքը օբյեկտիվ բողոք է առաջացրել մնացած թեկնածուների մոտ, ովքեր կամ արդեն տպել էին իրենց գրավոր աշխատանքները, կամ սպասում էին տպելուն:

Վերոնշյալ կարգի համաձայն՝ *Քննության համար հատկացված ժամանակն ավարտվելուց հետո հավակնորդը պարտավոր է դադարեցնել աշխատանքը և սույն կարգի 37-րդ կետով սահմանված կարգով այն անմիջապես հանձնել Դատական դեպարտամենտի ներկայացուցչին:*

Քննասենյակների օդափոխության բացակայություն

Արձանագրվել է բոլոր քննասենյակներում օդափոխության բացակայություն, ինչի պայմաններում քննությունը սկսվելուց մեկ ժամ հետո սենյակներում տոթ է եղել:

Չնայած լուսամուտները բացելու հնարավորություն եղել է, սակայն որոշ թեկնածուներ բողոքել են միջանցիկ քամուց:

Քննական արկղեր

Որակավորման արդյունքների համար նախատեսված է եղել երկու փակ և պլումբված արկղ:

Քննական արդյունքները թեկնածուների կողմից քննության ավարտին տպվել են երկու օրինակից: Մեկը՝ անուն ազգանունով, մյուսը՝ անանուն (համապատասխան ծածկագրով) որոնք գցվել են համապատասխան արկղերի մեջ:

Ստուգող հանձնաժողովի կողմից արդյունքները ստուգելուց հետո՝ 3 օր անց, Դեպարտամենտի կողմից դիտորդների ներկայությամբ անանուն աշխատանքները համեմատվել են մյուս արկղի՝ ծածկագրով գրավորների հետ:

⁷ Նույն տեղում, կետ 21



Քննական հանձնաժողովի ձևավորում և քննության արդյունքների ստուգում

ԲԴԽ 2019 թվականի մարտի 11-ի թիվ ԲԴԽ-15-Ո-58 որոշմամբ սահմանված՝ Գնահատման հանձնաժողովի և քննական աշխատանքները ստուգելու և գնահատելու վերաբերյալ կարգի համաձայն՝ *Որակավորման գրավոր քննության (այսուհետ՝ Քննություն) աշխատանքները ստուգելու և գնահատելու նպատակով քննություն անցկացնելու օրը՝ քննության ավարտից անմիջապես հետո, Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 104-րդ հոդվածի 2-5-րդ կետերով սահմանված կարգով վիճակահանությամբ ձևավորվում է համապատասխան մասնագիտացում ունեցող գնահատման հանձնաժողով⁸:*

Վիճակահանությունն անցկացվում է Խորհրդի դռնփակ նիստում՝ քննությունն ավարտվելու մասին Դատական դեպարտամենտի՝ Խորհրդի կողմից լիազորված ներկայացուցչի հաղորդումն ստանալուց հետո անհապաղ:

Կարգը, սակայն, չի սահմանում, թե ինչ չափանիշների հիման վրա են ընտրվում հանձնաժողովի անդամները, ինչպիսի մասնագիտական պահանջներ են ներկայացվում վերջիններիս:

Կարգի համաձայն՝ *Գնահատման հանձնաժողովի աշխատանքն իրականացվում է գաղտնի և դռնփակ ընթացակարգով:*

Չի սահմանվում, սակայն՝ հանձնաժողովի աշխատանքն իրականացվում է անընդմեջ, թե ընդհատումներով: Դատական դեպարտամենտի ներկայացուցիչները հավաստիացրել են, որ հանձնաժողովի աշխատանքներն իրականացվում են անընդմեջ:

Գրավոր աշխատանքները բացելուց և հրապարակելուց հետո տեղում պարզ է դարձել, որ հանձնաժողովի անդամները նախորդ երեկոյան դուրս են եկել և առավոտյան վերադարձել:

Գնահատման չափորոշիչներ և գնահատման սանդղակ

Դատական օրենսգրքի դրույթներին համապատասխան՝ Բարձրագույն դատական խորհուրդը 2018 թվականի օգոստոսի 23-ին ընդունել է ԲԴԽ-34-Ո-91 որոշումը, որով սահմանել է որակավորման գրավոր քննության ձևը, քննական հարցերի կառուցվածքի և բովանդակության նվազագույն պահանջները և գրավոր առաջադրանքների տարբերակների քանակը, որակավորման գրավոր քննության հարցերի մշակման կարգը, որակավորման գրավոր քննության կազմակերպման և անցկացման կարգը, գնահատման հանձնաժողովի աշխատանքը գաղտնի իրականացնելու անհրաժեշտ մանրամասները, **քննական աշխատանքները ստուգելու և գնահատելու կարգը**, գնահատման չափորոշիչները և գնահատման սանդղակը, որակավորման գրավոր քննության արդյունքներով նվազագույն

⁸ Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.court.am/arm/top/bdx/decisions/2019/%D4%B2%D4%B4%D4%BD-15-%D5%88-58.pdf>



անցողիկ միավորը և որակավորման գրավոր քննության արդյունքների ստուգաթերթի ձևը սահմանելու մասին: Որոշման Հավելված 4-ով սահմանվում է նաև քննական աշխատանքները ստուգելու և գնահատելու կարգը, գնահատման չափորոշիչները և գնահատման սանդղակը⁹: Ըստ այդմ՝ գնահատման համար սահմանվում են հետևյալ պայման/կանոնները.

- Աշխատանքի ստուգումն իրականացնում են գնահատման հանձնաժողովի բոլոր անդամները, առաձին-առանձին լրացնում են Խորհրդի կողմից հաստատված ստուգաթերթը:
- Գրավոր աշխատանքի ստուգման համար ապահովում են ուղենիշային տիպային պատասխաններ, որոնք, սակայն, հանձնաժողովի համար պարտադիր չեն և ունեն օժանդակող նշանակություն:
- Գրավոր աշխատանքի համար սահմանվում են հետևյալ 4 (չորս) չափորոշիչները.
 1. Իրավական գիտելիքներ մասնագիտացման ոլորտում
 2. Վերլուծական և մեկնաբանման հմտությունները
 3. Վերլուծությունից բխող եզրակացություն
 4. Իրավաբանական գրավոր խոսքի հստակություն և տրամաբանական սահունություն:

Գնահատման առաջին երկու չափորոշիչների համար տրված են նաև որոշակի բացատրություններ, սակայն վերջին երկուսի համար որևէ բացատրություն սահմանված չէ:

Ներկայացված յուրաքանչյուր չափորոշիչի համար սահմանվել են առավելագույն միավորները, համապատասխանաբար՝ 3 միավոր առաջին երկու չափորոշիչի համար, իսկ վերջին երկուսի համար՝ 2-ական միավոր:

Ըստ ներկայացված չափորոշիչների՝ յուրաքանչյուր հարցադրում գնահատվում է առավելագույնը 10 միավոր՝ միավորների քայլը՝ 1:

Ըստ էության, թեև գրավոր աշխատանքի համար սահմանվում են չափորոշիչները, սակայն դրանց միատեսակ ընկալման և դրանց հիման վրա՝ աշխատանքի գնահատման մեջ կամայականության բացառման համար որևէ բացատրություն և չափանիշ (ցուցիչ) չի սահմանվում:

Ավելին, թեև սահմանվում է միավորների քայլը, սակայն հստակ և կանխատեսելի չէ, թե սխալ պատասխանի դեպքում նախատեսված ընդհանուր միավորը որքանով պետք է նվազեցվի կամ,

⁹ Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.court.am/arm/top/bdx/decisions/%D4%B2%D4%B4%D4%BD-34-%D5%88-91.pdf>, էջ 14



օրինակ, եթե կոնկրետ իրավիճակի առնչությամբ չեն նշվել ՄԻԵԴ-ի, սահմանադրական դատարանի և վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված բոլոր իրավական դիրքորոշումները, այլ միայն մեկը կամ երկուսը, ապա միավորն ինչպե՞ս կամ որքանո՞վ պետք է նվազեցվի:

Սահմանված չէ նաև, թե որ **էքսպիին միավորի** նկատմամբ պետք է այդ մեկ միավոր քայլը հաշվարկվի:

Քննական աշխատանքները ստուգված վիճակով բացվելուց հետո դիտորդները Դատական դեպարտամենտի ներկայացուցիչների ներկայությամբ առանձին սենյակում ծանոթացել են պատահականության սկզբունքով ընտրված արդեն ստուգված քաղաքացիական ուղղության մեկ գրավոր աշխատանքի:

Կարգի համաձայն՝ Ստուգված գրավոր աշխատանքին կցվում է ստուգողի կողմից լրացված ստուգաթերթը, որը պետք է պարունակի աշխատանքում առկա թերությունների վերաբերյալ ստուգողի կատարած համապատասխան նշումները: Վերջիններս պետք է հնարավորություն տան եզրահանգումներ անելու գնահատման հիմքում ընկած հանգամանքների մասին:

Քննության արդյունքներն ամփոփելուց հետո կազմվում է գնահատման հանձնաժողովի արձանագրություն, որը պետք է տեղեկություններ պարունակի յուրաքանչյուր քննական հարցի համար հավակնորդների ստացած միավորների և դրանց հանրագումարի մասին: Արձանագրությունը ստորագրում են գնահատման հանձնաժողովի բոլոր անդամները:

Դիտորդի կողմից արձանագրվել է, որ գրավոր քննության արդյունքների ստուգաթերթի մեջ *Նշումներ, մեկնաբանություններ-ի* հատվածում հանձնաժողովի 7 անդամների կողմից տրվել են աշխատանքի վերաբերյալ *նույն մեկնաբանություններն ու պատճառաբանությունները* միևնույն բառապաշարով: Դիտորդի կողմից դիտարկվել են տվյալ աշխատանքի բոլոր հարցերի վերաբերյալ տրված մեկնաբանությունները, և կրկին արձանագրվել է նույնանման մոտեցում:

Ավելին, առանց խորամուխ լինելու աշխատանքի բովանդակային և որակական կողմի վրա՝ դիտորդի կողմից ուշադրություն է դարձվել գրավոր աշխատանքում տրված վերլուծությանն ու եզրահանգումներին՝ համապատասխանաբար դիտարկելով այն գնահատման «ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ, ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ու ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ» պահանջի ներքո: Արձանագրվել է, օրինակ, որ 3 էջանոց հարցի պատասխանի մեջ հավակնորդը տվել է 3-4 տողից բաղկացած վերլուծություն և 2-3 տողից բաղկացած եզրակացություն՝ մնացած էջերում ներառելով օրենքներից արտատպումներ: Նման վերլուծության և աշխատանքի համար հավակնորդը ստացել է սահմանված 3 միավորից 2, կամ 2-ից՝ 1 միավոր:

Դիտորդը ցանկություն է հայտնել դիտարկել բոլոր աշխատանքները՝ գնահատման վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար, սակայն համապատասխան պայմանների



բացակայության և ոչ աշխատանքային ժամ լինելու պատճառաբանությամբ դիտարկումը հետաձգվել է:

Թեև դատական դեպարտամենտի ներկայացուցչը հավաստիացրել է, որ դիտորդները հրավեր կատանան աշխատանքային ժամին գրավորները դիտարկելու, այնուամենայնիվ **մինչ սույն գեկույցի ներկայացման օրը դիտորդը նման հրավեր չի ստացել:**

ԴՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՂՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՐԿԱԾ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՓՈՒԼԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐ

2019 թվականի մայիսի 22-ին, 23-ին և 24-ին Բարձրագույն դատական խորհրդի վարչական շենքում տեղի է ունեցել դատավորների թեկնածուների գրավոր փուլը հաղթահարած հավակնորդների հարցազրույցների փուլը:

Համապատասխանաբար՝

- 2019 թվականի մայիսի 22-ին հարցազրույցի փուլին մասնակցել է քաղաքացիական մասնագիտացման 12 հավակնորդ,
- 2019 թվականի մայիսի 23-ին՝ 6 հավակնորդ,
- 2019 թվականի մայիսի 23-ին՝ քրեական մասնագիտացման 7 հավակնորդ,
- 2019 թվականի մայիսի 24-ին՝ վարչական մասնագիտացման 6 հավակնորդ:

Խորհրդի շենքի առաջին հարկի առանձին սենյակից իրականացվում էր հարցազրույցի ընթացքի ուղիղ տեսահեռարձակում: Դիտորդի արձանագրմամբ ուղիղ տեսահեռարձակումը բավարար էր հարցազրույցի ընթացքին հետևելու համար, սակայն տեխնիկական առումով հեռարձակման ձայնային որակը թույլ չէր տալիս լսել արտասանված յուրաքանչյուր միտք:

Ուղիղ հեռարձակման առաջին օրը և հետագա օրերին, բացի այդ օրվա հարցազրույցներին մասնակից հավակնորդներից, ներկա են գտնվել նաև հաջորդ օրը հարցազրույցին մասնակցող հավակնորդները: Վերջիններս հնարավորություն են ունեցել տեղեկանալ Խորհրդի անդամների կողմից հավակնորդներին տրվող ընդհանուր հարցերին, որոնք կրկնվել են նաև հաջորդ օրերին:

Հավակնորդների կողմից մինչև իրենց հարցազրույցը ընթացող հարցազրույցներին հետևելը, ըստ էության, կարգավորված չէ:

Հարցազրույցի առաջին և երկրորդ օրը ԲԴԽ կազմը հանդես է եկել Խորհրդի 9 անդամով, վերջին՝ երրորդ օրը՝ 8 անդամով՝ պայմանավորված Խորհրդի նախագահ Գագիկ Հարությունյանի հրաժարականով¹⁰:

¹⁰ Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.court.am/index.php?link=news/24-05-2019/24-05-2019.htm>



Հարցազրույցի ընթացքը

Հարցազրույցի առաջին մաս

Դատական օրենսգրքի 108-րդ հոդվածի համաձայն՝ հարցազրույցը բաղկացած է երկու փուլից՝

- Անձնական գործի ներկայացում և հոգեբանական թեստի միջոցով որակների ստուգում,
- Դատավորի վարքագծի կանոնների վերաբերյալ խնդրի լուծում:

Հարցազրույցի առաջին մասում Խորհրդի անդամներից մեկի կողմից ներկայացվում է հավակնորդի անձնական գործը, ինչից հետո վերջինս անցնում է հոգեբանական թեստը: Հոգեբանական թեստից հետո հարցազրույցի առաջին մասը համարվում է ավարտված, և հավակնորդը անցնում է դատավորի վարքագծի կանոններին վերաբերող հիպոթետիկ խնդրի լուծմանը:

Համաձայն ԲԴԽ՝ դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակում ընդգրկված անձանց հետ հարցազրույցի կազմակերպման և անցկացման կարգի¹¹՝ *յուրաքանչյուր հավակնորդի հետ հարցազրույցի առավելագույն տևողությունը մեկուկես ժամ է:*

Ընդհանուր առմամբ, դիտարկման բոլոր օրերի արդյունքները ցույց են տվել, որ մեկ հավակնորդի հետ հարցազրույցի ողջ ընթացքը տևել է միջինում 45-60 րոպե:

Համաձայն հարցազրույցների անցկացման կարգի 13-րդ կետի՝ *խորհրդի նիստում հավակնորդների անձնական գործը և մասնագիտական փորձը ներկայացնելու համար զեկուցողների ընտրությունը կատարվում է հավասարաչափ բաշխման և պատահական ընտրության սկզբունքով՝ Խորհրդի դռնբաց նիստում կազմակերպված վիճակահանության կարգով, և ձևակերպվում է Խորհրդի որոշմամբ:*

Մինչ հարցազրույցների սկսվելը նախագահողի կողմից ներկայացվել է հարցազրույցի անցկացման կարգը, հարցազրույցների անցկացման սենյակում գտնվել թույլատրվող անձանց շրջանակը, վերջիններիս իրավասությունները և ընթացակարգային այլ հարցեր:

Հավակնորդները հարցազրույցների անցկացման սենյակ են հրավիրվել՝ ըստ որոշված հերթականության:

¹¹ Դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական կամալրված ցուցակում ընդգրկված անձանց հետ հարցազրույցի կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին, հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.court.am/arm/top/bdx/decisions/%D4%B2%D4%B4%D4%BD-40-%D5%88-110.pdf>



Այնուհետև ներկայացվել է յուրաքանչյուր հավակնորդի անձնական գործը՝ անձնական տվյալները, մասնագիտական փորձը: Այս հատվածում անդամները հնարավորություն են ունեցել տալ մասնագիտության հետ կապված հարցեր, արական սեռի ներկայացուցիչներից ճշտել զինված ուժերում ծառայած լինելու հանգամանքը և այլն:

2019 թվականի մայիսի 16-ին՝ հարցազրույցի փուլից առաջ, Խորհուրդը առանձին նիստով հաստատել է դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակում ընդգրկված անձանց անձնական գործերը և մասնագիտական փորձը հարցազրույցին ներկայացնող զեկուցողների ցանկը¹²:

Յուրաքանչյուր զեկուցող նախ ընթերցել է հերթական հավակնորդի կենսագրականը, ներկայացրել կրթական, մասնագիտական փորձը, ինչից հետո հարցերի հնարավորություն է տրվել, հավակնորդները իրավունք են ունեցել նաև կատարել լրացումներ կամ ներկայացնել նկատառումներ՝ իրենց անձնական գործի հետ կապված:

Ըստ Կարգի՝ հարցազրույցի ժամանակ Խորհրդին տրամադրվում է հաստատված ձևի հարցաթերթ, որտեղ նշվում են հավակնորդի գնահատման ենթակա հատկանիշները (չափորոշիչները), մասնավորապես՝

- 1) Մասնագիտական աշխատանքի փորձառությունը,
- 2) Դատավոր դառնալու շարժառիթն ու ակնկալիքը,
- 3) Դատավորի կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածությունը,
- 4) Ինքնատիրապետումը,
- 5) Վարվեցողությունը,
- 6) Հեղինակության (ազդեցության) չափավոր կիրառումը,
- 7) Պատասխանատվության զգացումը,
- 8) Ունկնդրելու կարողությունը,
- 9) Հաղորդակցելու հմտությունները,
- 10) Արդարամտությունը,
- 11) Վերլուծական կարողությունները,
- 12) Կարճ ժամանակահատվածում համապատաստից կողմնորոշվելու կարողությունը,
- 13) Դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ գիտելիքների առկայությունը (միասնական ցուցակում որպես գիտական աստիճան ունեցող անձ ընդգրկված հավակնորդի դեպքում):

Ներկայացված չափորոշիչները ենթաչափորոշիչների կամ այլ պարզաբանող հարցերի չեն բաժանվում, դրանց բացատրության վերաբերյալ որևէ տեղեկություն չի տրամադրվում: ԲԴԽ

¹² Որոշում Դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակում ընդգրկված անձանց անձնական գործերը և մասնագիտական փորձը բարձրագույն դատական խորհրդի նիստերում ներկայացնելու համար զեկուցողներ ընտրելու մասին <http://www.court.am/arm/top/bdx/decisions/2019/%D4%B2%D4%B4%D4%BD-31-%D4%B1%D5%88-21.pdf>



անդամի կողմից ներկայացվող հարցերի թիվը, դրանց ձևակերպումը և որ ավելի կարևոր է, դրանց գնահատումը վերապահված է ԲԴԽ անդամի հայեցողական լիազորությանը: Հատկանշական է, որ ԲԴԽ կողմից բանավոր հարցազրույցի արդյունքներն են, որ դառնում են վճռորոշ. հավակնորդը կարող է ներկայացվել ցուցակում ընդգրկվելու համար բանավոր հարցազրույցի արդյունքներից հետո՝ անկախ նրանից ինչքան բարձր միավոր է հավաքել որակավորման քննության գրավոր փուլում:

Այս առնչությամբ Վենետիկի հանձնաժողովը դեռևս 2017 թվականի հոկտեմբերին ՀՀ Դատական օրենսգրքի վերաբերյալ կարծիքում¹³ մտահոգություն է հայտնել՝ նշելով, որ «թեև հարցազրույցը թեկնածուներին գնահատելու կարևոր փուլ է, չի բացառվում, որ այն թեկնածուն, ով որակավորման գրավոր քննությունից բարձր միավորներ է հավաքել, կարող է, ԲԴԽ-ի գնահատմամբ, բանավոր հարցազրույցի փուլը հաղթող չհամարվել: Նման համակարգի առկայության և կիրառության պարագայում առավել ուժեղ հավակնորդները կարող են փոխարինվել առավել թույլ հավակնորդներով: Առավել ևս, երբ հավակնորդների գրավոր քննության արդյունքների մեջ առկա է մեծ տարբերություն: Վենետիկի հանձնաժողովը խորհուրդ է տվել վերանայել այդ համակարգը և հասցեագրել բարձրացված մտահոգությունները»: Այնուամենայնիվ «ՀՀ Դատական օրենսգրք» սահմանադրական օրենքն այդ մտահոգությունները չի հասցեագրել, և գործող համակարգը մեծ հայեցողական լիազորություն է վերապահում ԲԴԽ-ին՝ դատավորի թեկնածուներ ընտրելու գործում:

Դիտորդության ընթացքում արձանագրվել է, որ զեկուցողները հավակնորդների անձնական գործերը ներկայացնելիս ընդհանուր առմամբ պահպանել են չեզոքություն: Այնուամենայնիվ, 2019 թվականի մայիսի 24-ի հարցազրույցները սկսվելուց առաջ Խորհրդի անդամներից Հ. Հովհաննիսյանը ողջունել է միջանցքում հավաքված բոլոր հավակնորդներին՝ մինչ սենյակ մտնելը: Վերջինս վարչական մասնագիտացման հավակնորդներից Ա. Չիլինգարյանին առանձին է ողջունել՝ ակնհայտ տարբերվող մոտեցմամբ: Հետագայում Ա. Չիլինգարյանի անձնական գործը ներկայացվել է անդամ Հ. Հովհաննիսյանի կողմից: Ավելին, Ա. Չիլինգարյանի հարցազրույցի ընթացքում հնչեցված հարցերին վերջինիս կողմից պատասխան տալիս Հ. Հովհաննիսյանը պարբերաբար գլխի շարժումով հավանության է տվել պատասխաններին, ինչը չի նկատվել մնացած հավակնորդների պարագայում: Թեև հավակնորդներին հիմնականում տրվել են նույն հարցերը, Ա. Չիլինգարյանի պարագայում Հ. Հովհաննիսյանի կողմից միայն այդ թեկնածուին է տարբերակվող հարց տրվել: Տվյալ հավակնորդը հարցազրույցների ամփոփման արդյունքում ներառվել է դատավորների թեկնածուների հավակնորդների վարչական մասնագիտացման բաժնի ցուցակում¹⁴:

Հոգեբանի մասնակցություն և հոգեբանական թեստ

¹³ CDL-AD(2017)019, 117-118 կետեր

¹⁴ Փակ գաղտնի քվեարկությունների արդյունքում դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը կազմելու և հաստատելու մասին, հասնելի է հետևյալ հղումով՝ <http://www.court.am/arm/top/bdx/decisions/2019/%D4%B2%D4%B4%D4%BD-36-%D5%88-83.pdf>



Համաձայն հարցազրույցի կազմակերպման և անցկացման կարգի՝ Խորհրդի նիստին մասնակցող հոգեբանը (հոգեբանները) իր (իրենց) հարցադրումները հավակնորդին ներկայացնում են գրավոր: Հոգեբանի հարցերին պատասխանելու համար հավակնորդին տրամադրվում է 15 րոպե:

Խորհրդի կողմից ընտրվում է հոգեբան, որին հանձնարարվում է մշակել հավակնորդների՝ դատավորի աշխատանքի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական անձնական հատկանիշները (մասնավորապես՝ ինքնատիրապետում, վարվեցողություն, հեղինակության չափավոր կիրառում, պատասխանատվության զգացում, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, արդարամտություն) բացահայտելուն ուղղված հոգեբանական հարցեր¹⁵:

3 օրերի ընթացքում հարցազրույցներին մասնակցել է մեկ հոգեբան¹⁶:

Ո՛չ հարցազրույցների անցկացման վերոնշյալ կարգով, ո՛չ որևէ այլ ակտով հոգեբանին ընտրելու կարգը չի հստակեցվում, հավելյալ տեղեկություն, թե ինչ ընթացակարգով է հոգեբան ընտրվում, ինչ չափանիշներով, օրենսդրությամբ նախատեսված չէ:

Հատկանշական է, որ ըստ սահմանված Կարգի՝ նույն հարցերը հավակնորդներին ներկայացնում են նաև ԲԴԽ անդամները¹⁷, և կարգավորված չէ, թե պատասխաններն ինչպես են գնահատվում հոգեբանի և ԲԴԽ անդամների կողմից:

Հոգեբանի կողմից պատրաստված հոգեբանական թեստը ներառել է դատավորի պաշտոնում արդյունավետ գործունեության համար հավակնորդի անձնական հատկանիշների բացահայտմանն ուղղված 42 արժեքների ցանկ: Հավակնորդներից նախ պահանջվել է, արժեքներին ծանոթանալով, դրանցից յուրաքանչյուրը գնահատել 1-5 բալային սանդղակով՝ ըստ իրենց համար կարևորության: Սյնուհետև պահանջվել է թվարկել 10 առավել բարձր գնահատված արժեքները, և հետո դրանցից ընտրել հավակնորդի համար 5 ամենակարևոր արժեքները:

Հավակնորդը լրացված թեստը հանձնել է հոգեբանին, սակայն որևէ եզրակացություն թեստի արդյունքների վերաբերյալ հավակնորդին չի ներկայացվել:

Հոգեբանական թեստից հետո հավակնորդին, ԲԴԽ Կարգով սահմանված չափորոշիչների համաձայն, հարցեր են տվել նաև ԲԴԽ անդամները:

Հիմնականում տրվել են հետևյալ հարցերը՝

- Ի՞նչ դեր է խաղում ձեր կյանքում նշված արժեքներից յուրաքանչյուրը:
- Կարո՞ղ եք նշել կյանքում ձեր ամենամեծ անհաջողությունը:
- Կարո՞ղ եք նշել ձեր 3 թերի կողմերը/զծերը:

¹⁵ Դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համարված ցուցակում ընդգրկված անձանց հետ հարցազրույցի կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին, հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.court.am/arm/top/bdx/decisions/%D4%B2%D4%B4%D4%BD-40-%D5%88-110.pdf>, կետ 15

¹⁶ Դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համարված ցուցակում ընդգրկված անձանց հետ հարցազրույցի անցկացման համար հոգեբանական հարցեր մշակելու նպատակով հոգեբան ընտրելու մասին, հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.court.am/arm/top/bdx/decisions/2019/%D4%B2%D4%B4%D4%BD-33-%D4%B1%D5%88-22.pdf>

¹⁷ Ibid 11, կետ 41



- Հնարավորություն ունեք 3 ցանկություն իրականություն դարձնել, որո՞նք են այդ ցանկությունները:
- Ինչպե՞ս ձեզ կբնութագրեին ձեր մտերիմները:
- Ինչպի՞սի աշխատանք երբեք չեք կատարի: Ինչպի՞սի մասնագիտությամբ երբեք չեք աշխատի:
- Ինչո՞ւ եք ցանկանում դառնալ դատավոր:
- Ինչո՞ւ եք թողնում փաստաբանի աշխատանքը: /փաստաբանների պարագայում:
- Նկարագրեք իրավիճակ, երբ ձեր կյանքում 2 արժեքներ բախվել են միմյանց: Օրինակ, երբ բախվել է արդարամտության ձեր ձգտումն ու պատասխանատվության զգացումը:
- Ո՞ւմ հետ ճանապարհ չեիք գնա, ինչպիսի՞ անձի հետ:
- Եթե նշանակվեք դատավոր, պատրա՞ստ եք Երևանից տեղափոխվել մարզ:
- Այլ հարցեր:

Ներկայացված հարցերին հավակնորդները հիմնականում դժվարացել են պատասխան տալ, սակայն ներառվել են հաստատված վերջնական ցուցակում, ինչը ևս վկայել է, որ ԲԴԽ անդամները բանավոր հարցազրույցի ժամանակ դրսևորում են հայեցողական մեծ լիազորություն:

Օրինակ՝ հավակնորդը չի կարողացել պատասխանել այն հարցին, թե «եթե հնարավորություն ունենայիք՝ 3 ցանկություն իրականություն դարձնել, որո՞նք են այդ ցանկությունները», կամ «ինչո՞ւ եք ցանկանում դառնալ դատավոր»:

Խորհրդի նախագահի կողմից պարբերաբար նշվել և հիշեցվել է, որ տվյալ հարցերին անհրաժեշտ է տալ ոչ թե տեսական պատասխան կամ մատուցել արժեքների նկարագրություն, այլ ներկայացնել կոնկրետ հավակնորդի կյանքից օրինակներ և դրվագներ: Այս առումով հավակնորդների մեծ մասը դժվարացել է արժանիքների ներկայացման առնչությամբ լինել առավելագույնս կոնկրետ և ներկայացնել օրինակներ դրանց կապակցությամբ, ինչը կարող է վկայել նաև այն մասին, որ նման մոտեցմամբ հարցադրումներն ընկալելի չեն:

Առանձին դեպքերում նկարագրվել է իրավիճակ և հավակնորդից պահանջվել է դրա վերաբերյալ ներկայացնել իր դիրքորոշումը: Օրինակ՝ «Մեքենայով գնում եք, հորդառատ անձրև է տեղում, փողոցում տեսնում եք ձեր ընկերոջը, գեղեցիկ աղջկա և ձեր կնոջը, հնարավորություն ունեք վերցնելու միայն նրանցից մեկին, ու՞մ կընտրեք»:

Կամ այսպիսի իրավիճակ՝ «Այ տեսնում եք, դրսում հավաքվել են պիկետավորներ (բառը գրված է այնպես, ինչպես հնչեցվել է խորհրդի անդամ Հ. Հովհաննիսյանի կողմից), նրանք փակել են Խորհրդի մուտքի ու ելքի բոլոր դռները, որո՞նք կլինեն ձեր քայլերը»:

Բոլոր այն դեպքերում, երբ հավակնորդը հանդիսացել է դատարանի աշխատակազմի ներկայացուցիչ (օգնական, խորհրդական) Խորհրդի վերոնշյալ անդամի կողմից տրվել է նաև ճշտող հարց, թե որ դատավորի օգնականն է հանդիսանում:



Հարցազրույցների ընթացքում, բացի վերոնշյալ ընդհանուր հարցերից, առանձին հավակնորդների տրվել են նաև հետևյալ հարցերը՝ կախված քննարկման և հարցուպատասխանի ընթացքից՝

- Որտե՞ղ եք ձեզ տեսնում 5 տարի հետո:
- Նկարագրեք աշխատանքային իրավիճակ, երբ հաղորդակցվելու խնդիր եք ունեցել:
- Դատավորը ի՞նչ ռիսկայնություն պետք է ցուցաբերի:
- Ճնշման տակ աշխատանքի ի՞նչ օրինակ կհիշեք:
- Ինչպի՞սի երեք դասեր եք քաղել կյանքում:

Հարցազրույցի երկրորդ մաս

Հարցազրույցի երկրորդ մասում՝ հոգեբանական թեստերի ավարտից և դրա վերաբերյալ քննարկումից հետո, հավակնորդները մոտենում են Դատական դեպարտամենտի ներկայացուցչին և սեղանից պատահականությամբ ընտրում երկրորդ փուլի համար անհրաժեշտ խնդիրը: Այն իրենից ներկայացնում էր դատավորի վարքագծի կանոններին վերաբերող հիպոթետիկ խնդիր-իրավիճակ, որի կապակցությամբ հավակնորդից պահանջվում էր ներկայացնել վերլուծություն և դիրքորոշում՝ դատավորի վարքագծի հիմնարար կանոնների, դատավորին ներկայացվող պահանջների և որպես դատավոր գործելու համար կարևոր այլ անձնական հատկանիշները գնահատելու համար:

Այդպիսի իրավիճակային խնդրի օրինակ է եղել՝ *«Դուք հրավիրված եք գրքի շնորհանդեսի, այնտեղ հանդիպում եք նաև Ձեր վարչություն գտնվող գործով փաստաբանի, ով փորձում է տեղեկություններ տալ գործի մասին և խոսում փորձաքննություն նշանակելու անհրաժեշտության մասին: Ինչպիսի՞ն կլինեն Ձեր քայլերը»:* Առանձին դեպքերում Խորհրդի անդամները հավակնորդից պահանջել են իրավական վերլուծության մեջ նշել նաև վերաբերելի կոնկրետ օրենսդրական հոդվածները:

Ընդհանուր դիտարկումներ հարցազրույցի ընթացքի վերաբերյալ

- Քրեական մասնագիտացման թեկնածուների հավակնորդների ցանկի մեջ եղել է գրավոր քննությունից առավելագույն՝ 96 միավոր հավաքած թեկնածու, ով բանավոր հարցազրույցի ժամանակ ևս պատասխանել է հարցերին, սակայն, ԲԴԽ որոշմամբ դատավորի թեկնածուների ցանկում չի ներառվել:
- Քաղաքացիական մասնագիտացման բաժնի հավակնորդների ցուցակում են հայտնվել այն թեկնածուները, ովքեր գրավոր քննության ժամանակ քննության ավարտից **հետո հնարավորություն են ունեցել մնալ քննասենյակում և լրացնել ու փոփոխել իրենց աշխատանքները:** Ընդ որում, հավակնորդներից մեկը հանդիսացել է դատական դեպարտամենտի աշխատակից:



Հարցազրույցների ընթացքում ԲԴԽ անդամների գործելակերպի վերաբերյալ դիտարկումներ

Հարցազրույցների ընթացքում խորհրդի անդամների վերաբերյալ արձանագրվել է հետևյալը՝

- ԲԴԽ անդամները պարբերաբար սենյակից դուրս են եկել երկար ընդմիջումներով, այնուամենայնիվ ըստ Կարգի՝ անհատապես գնահատել են նաև այն թեկնածուին, ում հարցազրույցի ընթացքին տևական ժամանակ ակնհայտորեն ներկա չեն եղել:
- ԲԴԽ անդամները հարցազրույցի ընթացքում օգտագործել են իրենց հեռախոսները, ԲԴԽ անդամներից մեկը հարցազրույցի երրորդ օրը մասնակցել է ականջակալով՝ զուգահեռ օգտագործելով հեռախոսը:
- Հարցազրույցի ընթացքում ԲԴԽ անդամները զուգահեռ քննարկումներ և խոսակցություններ են ունեցել:
- Արձանագրվել է նաև, որ հավակնորդի հարցազրույցի ընթացքում հոգեբանը պարբերաբար ուղղորդել է ԲԴԽ անդամներին՝ թղթի վրա ինչ-որ բան գրելով և փոխանցելով ԲԴԽ անդամներին:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որակավորման քննության հայտարարության վերաբերյալ.

- Հավակնորդների որակավորման քննության վերաբերյալ հայտարարության մեջ ներառել քննական խնդիրը գրելու վերաբերյալ տեխնիկական բոլոր պահանջները:

Դատական դեպարտամենտի կողմից քննության տեխնիկական մասի ապահովման վերաբերյալ.

- Դատական դեպարտամենտի կողմից առավելագույնս ապահովել գրավոր քննությունների ժամանակ անհրաժեշտ բավարար տեխնիկական պայմաններ՝ համակարգչով աշխատելու, գրավոր աշխատանքը տպելու համար: Մասնավորապես՝ ապահովել, որ համակարգիչները գրավոր քննությունը սկսելուց առաջ և քննության ավարտին միանան և արգելափակվեն ավտոմատ կերպով, որպեսզի քննության համար հատկացված ժամկետի ավարտից հետո թեկնածուների կողմից հնարավոր չլինի շարունակել աշխատանքը:

Քննության ավարտի և դրանից հետո քննասենյակներում հավակնորդների ֆիզիկական ներկայության վերաբերյալ.



- Խստորեն ապահովել, որ քննության ավարտից հետո գրավոր առաջադրանքը հանձնած թեկնածուն հեռանա ինչպես քննասենյակից, այնպես էլ հարակից տարածքներից:

Քննության ժամանակի և առաջադրանքների բարդության վերաբերյալ.

- Քննության ժամանակահատվածը համապատասխանեցնել քննական հարցի բարդությանը կամ որակավորման քննության համար նախատեսել երկու օր՝ առաջինը նյութական, երկրորդը ընթացակարգային իրավունքի վերաբերյալ առաջադրանքով:

Քննական հանձնաժողովի վերաբերյալ.

- Քննական հանձնաժողովի անդամների համար նախատեսել օբյեկտիվ չափանիշներ՝ ներառյալ մասնագիտական որակներն ու գիտելիքները:

Քննական առաջադրանքների չբացված օրինակների վերաբերյալ.

- Քննական առաջադրանքների չբացված օրինակների հետագա պահպանման և/կամ ոչնչացման վերաբերյալ հարցերին տալ հստակ օրենսդրական կարգավորում:

Գնահատման չափանիշների և ստուգաթերթի վերաբերյալ.

- Սահմանել հստակ գնահատման չափանիշներ և միավորների նվազեցման սանդղակ:
- Սահմանել քննական հանձնաժողովի անդամների կողմից յուրաքանչյուր գնահատման համար բովանդակային մեկնաբանություններ ու հիմնավորումներ ներկայացնելու պահանջ:

Երաշխավորել հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից հավակնորդների անհատական գնահատումն ու գնահատման հիմնավորումը: